

## ՅԱԻԻՏԵՆՈՒԹԻՒՆ

Հաստատութիւնները կը փոխուին—  
որ մնայ պատմենականութիւնը...  
«Հիմ առուածը»

Լեռզագալներից վեհապանծ ու վէս,  
Փէրուզ-Երկնքից—աստղերից անշէչ՝  
Դու արի՛ մեր մէջ շունչ-Եթերբի պէս—  
Յափտենութիւն, դու արի մե՛ր մէջ.—  
  
Քեզ ենք որոնու՞ տարիներ, դարեր  
Եւ սպասում ենք քո օր-գալատեան.  
Խառնակ են, շփոթ ե՛ւ շունչ, ե՛ւ տարրեր,  
Եւ սրտերն արիւն—մարդիկ մէջ արեան...  
  
Եւ թո՛ղ մեր միջից հեռանան առմիշտ  
Պղծութիւնները ունայն եւ զազիր,  
Անցուոր են մարդիկ, անցուոր է հանգիստ,  
Ե՛ւ տիրապետող կարգերը լասիր.—  
  
Քո մէջ է հոգին, հոգու օթեւան  
Եւ օրէնքները, օրինակութիւն.  
Հո մէջ է խիղճը, խիղճ բարոյական  
Ե՛ւ ծշմարտութիւն, Ե՛ւ արդարութիւն...  
  
Դու տիեզերքի եւ աստուածութեան  
Օթեւաններից մաքուք եւ անհուն,  
Ո՛, եկ վար իջիր հոգին մարդկութեան—  
Յափտենութիւն, յափտենութիւն...

ՅՈՎ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ